ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների մոտիվացիայի բարձրացումը հարցադրումների միջոցով

Անցկացման վայր՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Վարդան Ավետիսյան

Դպրոց՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

Մարտունի -2022

Բովանդակություն

1.Ներածություն.....2

2.Գրական ակնարկ.....7

3.Փորձարարական հետազոտություն.....14

3.1.Խմբի նկարագիրը.....14

3.2.Փորձարարական դասեր.....14

3.2.1.Փորձարարական դաս-1.....15

3.3.2.Փորձարարական դաս-2.....15

4.Վերլուծություն.....16

5.Գրականության ցանկ.....17

6.Հավելված.....17

1.Դասապլան-1.....18

2.Դասապլան-2.....22

2.Դասապլան-3.....26

1.Ներածություն

Հայոց պատմության դասընթացի տեղն ու դերը

Ճիշտէասված,որպատմությունըժողովրդիհավաքականհիշողությունն է,նրակենսագրությունը:Հայժողովուրդնաշ խարհիհնագույնժողովուրդներից է:Նապատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ուղիներին,բայցևփառավորուհերոսականճանապարհ:Գալովհազարամյակներիխորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ունշակույթ:Շարունակելովիրպատմականուղին՝ժամանակներիուդարբերիանբաժանուղեկիցհայժողովուրդըհասել էմ ինչևմերօրերըևոտքէդնումարդենորհազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ

ևայնպաշտպանելուուզորեղացնելուանսասանվճռականությամբ:Այսպես,ժամանակներիհոլովույթիմեջէգոյացելմե ր ժողովրդիպատմությունը,որըպետքէիմանայուրքանչյուրհայմարդ,ՀՀյուրքանչյուրքաղաքացի՝անկախտարիքից, զբաղմունքից և ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում,օտարությանմեջթեհայրենիքում,հայոցպատմությունննիմանալըպետքէբոլորիս,որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում էանթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը: Առանցհայոցպատմությանիմացությանանհնարէազգիլիիրավանդամկոչվել,որովհետևպատմությունըոչմիայնժողո վրդիանցածուղին,այլևնրամիսնուարյունը,հողնուջուրը,նրակերտած–ստեղծածը,նրաոգինուհոգեբանությունը,բն ավորություններնուխտանվածքն է: Հայոց պատմությունը մեծհնարավորություն ունի ձևավորելու ազգայինգիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայժողովրդիկյանքին, գիտությանը,հասարակականմտքինումշակույթին:

Հայոցպատմությանիմացությունննառավելագույնսհնարավորությունէտալիսիրականացնելու մերազգային իդեալը,ձևավորելու ուպահպանելուհայիկերպարը:

Հայոցպատմությունըբովանդակումէդաստիարակչականվիթխարիներուժ,հայրենասիրություն ևազգայինարժանապատիվգոյություն:

ՀայոցպատմությանիմացությունըհնարավորությունկտաՀայաստանիՀանրապետությանապագաքաղաքացունուս ումնառությանընթացքումձեռքբերածգիտելիքներնուհանաչողականհմտությունները,հայոցքաղաքակրթությանդար ավորավանդույթները,փորձըևանցյալիդասերըլավագույնսծառայեցնելիզորացմանևբարգավաճման ուղին բռնած

Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ուղերիմասին:

«Հայոց պատմություն» առարկայի ուսուցման նպատակը, խնդիրները և հայեցակարգային դրույթները:

Հայոցպատմությունառարկայիդասավանդմանգլխավորնպատակըազգայինգիտակցությամբօժտված,համակողմանիզարգացած,լիարժեքդաստիարակություն

ստացած,ազգայինևհամամարդկայինարժեքներովառաջնորդվողազատ,գիտակիցանհատի, հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այդ նպատակին հասնելու համարանհրաժեշտէլուծելկրթադաստիարակչականմիշարքկարևորխնդիրներ՝

Սովորողներին գիտելիք, միջնադարի,նոր և նորագույն ժամանակներն ընդգրկող հայոցպատմությանամբողջականգիտելիքներով,որոնցմիջովկարմիրթելիպետպետէանցնենազատության,անկախության,պետականությանստեղծմանևամրապնդմանհամար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը և դրանց վերաբերողփաստերը:Այդգիտելիքներըմեծապես կօգնենհասկանալուիմաստավորելհայժողովրդի անցյալնու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր և համակողմանիիմացությունըկօգնիմերհանրապետությանապագաքաղաքացիներինկապվելու մայր հողին, տեր կանգնելուհայրենիտունու տեղին:

Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդիխիզախուքաջարիզավակներիանձնազոհխրանքները,որոնքօրինակկդառնանսովորողներիհամար,կոգեշնչեննրանցևկմղենհայրենիքինանմնացորդնվիրվելուգործին:

Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու

զարգացմանօրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանո-թացնել հայ ժողովրդիմշակութային արժեքների ու համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենիերկրիմշակույթին, ժողովրդի հանճարովստեղծված պատմամշակութայինկոթողներինկձևավորիազգայինևհամամարդկայինմշակույթիժառանգորդի,պահպանողիուհարստացնողի գիտակցություն, կվեհացնի սովորողների ոգին, սեր կառաջացնի գեղեցիկինկատմամբ, կօգնի գեղեցիկը տեսնելուն, զգալուն և վերապրելուն, կսովորեցնի կապվել իրնախնիներիգեղագիտականու ստեղծագործական ավանդներին:

1. Ցույցտալժողովրդիաշխատասիրությունը,ազատ,խաղաղևստեղծագործաշխատանքիհնրաբնաձիհնձգտումը, վերհանելշինարարականտաղանդիուարարումներիլավագույնդրսևորումները:Ներարկելսերևհարգանքաշխատանքի,աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանցնկատմամբ:Դաստիարակել մարդկային-բարոյականայնպիսիորակներուարժանիքներ,ինչպիսիքենբարությունը,ազնվությունը,մաքրությունը, անկեղծությունը,համբերատարությունըևհամագործակցությունը:

2. Պատկերացումտալմերժողովրդիկյանքիուկենցաղի,ապրելակերպիուավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ուաշխատել մեր նախնիները, ինչպեսեն կառուցել, ընտանիք կազմել, սնվել ու հագնվել,ուրախացելուտխրել:Այսգիտելիքներըսովորողներինկմոտեցնենմերազգայինարմատներինուակունքներին :Ազգայինկենարարարմատներիցսնվելըկօգնինրանցավելիուժեղուամուրկանգնել հայրենիհողիվրա,զգալհայրենիքիուժն ուզորությունը:

3. Բացահայտել պատմամշակութային գործիչների[a] պատմություն կերտողների կյանքն ուգործը:Տալնրանցհամակողմանիբնութագիրըևմարդկայիննկարագիրը:Հասկանալիդարձնել,որպատմականայդգործիչներիմիջոցովենիրականացվումազգային-հասարակական ձգտումներնու իդեալները:

4. Բացահայտելպատմականհամարտությունը,հետ,որայնծնվումէտարբերսկզբնաղբյուրներիհամադրումից, կարծիքներիուտեսակետների,մտքերիուգաղափարներիբախումից:

5. Դաստիարակել ջերմ հայրենասիրություն« ձևավորել հայրենիքի, ազգային պետությանու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդսիրո ուհարգանքիխոր զգացում:Ներարկելայնգաղափարը,որ հայրենիքինուհայոցբանակում ծառայելը պատվի գործ է: Դաստիարակել հայրենիքին նվիրվելու, այն կյանքիգնովպաշտպանելու կամք ու վճռականություն:

6. Ճանաչելիդարձնել Հայաստանաշխարհնուհայրենի բնօրրանը,բնապատմականևպատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայժողովուրդը:Ցույցտալհայժողովրդիտեղն ու խաղացածդերը քաղաքակիրթաշխարհում:

7. Հասնելայնբանին,որիրժողովրդիհարուստպատմականփորձովզինվածՀայաստանիվաղվաքաղաքացինգիտակցիրանմիջականմասնակցությանանհրաժեշտությունը,զգայինհիմնախնդիրներիլուծման,անկախպետականությանկերտման,հայրենիքիբարգավաճմանև վերածնությանգործին:

8. Նպաստելմարդասիրությանևսոցիալականարդարությանոգովտոգորվածժամանակակից ազատու գիտակիցանհատիև քաղաքացու ձևավորմանը:

9. Ձևավորելսեփականգործունեությունը,հանդուրժողականությանևմարդուիրավունքների,ինչպեսնաևհամամարդկայինբարոյականսկզբունքներինհամապատասխան կառուցելուպահանջմունքևկարողություն:

10. Ձևավորելգիտակիցվերաբերմունքհամամարդկայինգլոբալհիմնախնդիրների,բնականաղետների,մարդկությանճակատագրիևապագայինկատմամբ:Առաջքերելմարդուության առջև ծառացած հիմնահարցերի լուծման գործում իրենց ավանդն ունենալուձգտումև ցանկություն:

11. Զարգացնելսովորողներիճանաչողական,տրամաբանական,ստեղծագործականմտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունե-ությանկարողությունները և հմտությունները:

ա.խթանելսովորողներիճանաչողականակտիվությունը,մտածողությանինքնուրույնությունը,սեփականգիտելիքներըինքնուրույնլրացնելուևհարստացնելուկարողությունները:

բ.սովորեցնելտեղեկատվությանաղբյուրներիցօգտվելու,ժամանակակիցտեղեկատվականհեղեղիմեջկողմնորոշվելու,անհրաժեշտտեղեկությունը,ինչ-ը,ընտրելու,մշակելու,վերածևակերպելու,այսինքն՝ գիտելիքկառուցելուկարողություններ:

գ. ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու,գնահատելու,վերացարկելու,ընդհանրացնելուևկանխատեսումներկատարելուկարողություններ:

դ.զարգացնելուսումնառությանընթացքումսովորողներիստացածգիտելիքներըևտեսականդրույթները պատմականկենդանինյութիվրակոնկրետացնելու,անցյալի,ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելուկարողությունները և հմտությունները:

ե. զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական

ճանաչողությանբոլորտեսակներըևկամայինորակները՝ լսողություն,տեսողություն,ուշադրություն,հիշողություն, կամք, համառություն, հույզեր, մտավոր գործողություններ՝ համեմատում,համադրում,ընդհանրացում, համակարգումևայլն:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներ իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ :Մեթոդների ընտրությունը ինքնանպատակ լինել չի կարոց :Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ որոնք իրական լուծում կարող են ստանակ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսուցման գործընթացի միջոցով :Պայմանականորեն ուսուցման մեթոդները այսօր երկու խումբ են կազմում ՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ ;Հետազոտական աշխատանքի թեման ընտրված է այն նպատակադրմամբ որ ուսումնասիրելու են ուսուցման ժամանակակից մեթոդներ դրանց իրականացման հնարավորությունները դպրոցում ;Կրթության նպատակն է իրականացնելու արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար, կարևոր նշանակություն ունի ուսուցման մեթոդների ընտրությունը ,հետազոտության իմ նաղընտրած թեման է ՝<<Աշակերտների մոտիվացիայի բարձրացումը՝հարցադրումների միջոցով >>

Գրական Ակնարկ

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Քրիստին Զինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու մտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա: Հոդվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու,

ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Պատմության մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման

որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Հոդվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը: 1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավա Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն ություն Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտները ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին:

Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

Հարցերի ճիշտ ընտրությունը և դրանց ճիշտ ձևակերպումն էականորեն կարող են փոխել

վերջնական արդյունքը: Եթե հարցադրման սկզբում դասին ներգրավված էին ընդամենը 3 −5 աշակերտ, ապա հարցերի ձևափոխման արդյունքում դասին ակտիվորեն մասնակցում էր գրեթե ողջ դասարանը: 2.Հարցական բառերի ռազմավարություն Հարցական բառերի ռազմավարություն Այս մեթոդը կիրառվում է, երբ աշակերտներն արդեն ծանոթ են թեմային: Առաջարկվում է աղյուսակ կազմել, որի ձախ կողմում պետք է գրել հարցական

բառերի մի ամբողջ շարք, իսկ աջ կողմում՝ թեմային առնչվող հասկացություններ: Այնուհետև օգտագործելով երկու աղյուսակների գրառումները՝ կազմել հնարավորինս շատ հարցեր, ֆիլտրել առաջարկված հարցերից 3-4 հարց, որոնք առավել հետաքրքիր են աշակերտների համար:

Օրինակ, Արաբական արշավանքները դեպի Հայաստան դասի ուսումնասիրման ժամանակ ստեղծվել է աղյուսակի այսպիսի տարբերակ (աղյուսակ 1.)

ական բառեր	ական տերմինները
Ինչպե՞ս, Ի՞նչ, Որտե՞ղ, Ինչու՞, Որտե՞ղ Որտե՞ղ	ական ցեղեր,Արաբական թերակղզի ,Ասորիք,Միջագետք,
Ինչպիսի՞,	նիա ,ամիրայություններ
Ովքե՞ր	ամեդ,Թ. Ռշտունի ,ոստիկան,Բագրատունիներ ,Սյունիներ ինիներ,Մամիկոնյաներ ,Հերթ,Աբուսեթ, Դավիթ Մամիկոնյան ,Գրիգոր նյան ,Արտավազդ Մամիկոնյան ,Աշոտ Մամիկոնյան ,Բուղա
Ե՞րբ, Որքա՞ն,Որտեղ,Քանի՞	թ. 643թ. 650թ. 703թ. 701թ. 775թ. 852թ.Վարդանակերտ,Արճեշ, ,Արյան Լիճ ,ապստամբություններ,1800 զոհ,35000 գերիներ ոանոց այրուձի ,15-60 տարեկան տղամարդիկ
Ու՞մ միջև	Արաբական պայմանագիր,

Օգտագործելով աղյուսակի ձախ սյունի հարցական բառերը և աջ սյունի հասկացությունները՝ սովորողները կազմեցին ավելի քան 20 հարց: Հարցերի կազմման գործընթացին մասնակցեցին բոլոր աշակերտները: Դասի երրորդ հատվածում պարզաբանվեցին ընտրված 3 կարևորագույն հարցերը ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ: 3.Պատասխանում Պատասխանում Պատասխանումեն անվանակոչվածները են անվանակոչվածները Այս ռազմավարության շրջանակում անվանակոչվում է աշակերտի հստակ անուն, որ պատասխանում է հարցին այն հնչեցնելուց հետո: Սա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից: Ցուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է ցանկացած հաջողություն, անգամ ամենափոքրը: Ավելին, եթե աշակերտի կողմից տրված պատասխանը այն չէ, ինչ ակնկալվում է, ապա ոչ թե պետք է հարցն ուղղել այլ աշակետի, այլ պատասխանող աշակերտին օգնել վերաձևակերպել

պատասխանը: Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը անվանակոչման» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները. • Նախապես զգուշացրե՛ք աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը: Յուրաքանչյուր աշակերտին տվե՛ք ձևավորող գնահատական: • Աշակերտներին տալ ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին: • Պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչյուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին: • Օգտագործե՛ք բաց հարցեր և օգնե՛ք աշակերտին հանգել ճիշտ պատասխանի: • Զափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը: 4.Վեց W-երի ռազմավարություն երի ռազմավարություն Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված «Վեց W-երի» ռազմավարությունը: Գերմաներենում հիմնական 6 հարցերը՝ ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, սկսվում են նույն՝ W տառով: Թեմայի ավարտից հետո սովորողները զույգերով երկխոսություն են վարում՝ փորձելով պարզել, թե ինչ է տվել իրենց տվյալ թեմայի ուսումնասիրությունը: Ասենք՝ «Ինչո՞ւ սովորեցիր այս թեման», «Ի՞նչ տվեց այն քեզ», «Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները» և այլն: Քննարկվել է խնդիր, որի լուծման արդյունքում սովորողները ստացած գիտելիքները կիրառել են անծանոթ իրադրությունում:

5. Պատասխանին սպասելու ժամանակ բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ

վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն,

ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները. • Սովորողների պատասխաններն ընդարձակվում են: • Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում: • Հայեցողական մտածողության դրսևորում: • Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը: • Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները: • Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող–սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը: Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար: 6.Հարցերի շղթայի մեթոդ Հարցերի շղթայի մեթոդ Լինում են դեպքեր, երբ բարդ հարցերը տեղին չեն՝ առանց նախապես ամրապնդելու գիտելիքային հիմքը: Օրինակ՝ ներածական դասընթացում ավելի պարզ հարցեր են պահանջվում: Ինտեգրատիվ դասընթացների ընթացքում ուսուցիչը արագորեն պետք է անցնի ավելի բարդ հարցերի, ավելի պարզ հարցեր տալուց հետո՝ ուղղված նախնական գիտելիքների պաշար ձևավորելու համար: Հարցերի ցանկը պետք է տարբերվի՝ կախված դասընթացի բովանդակությունից և նպատակներից:

Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ: Ավելին, աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է: Այսպիսով, չափից շատ հարցերիօգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն: Այսպիսով, բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Եվ այսպես հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր

ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները ուսումնառության մեջ առանցքային դեր ունեն: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ:https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf

ՈՒսուցական գործընթացի կազմակերպում առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը :

Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնել այլև ,դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը ,որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից :

Հարցերը պետք է լինեն ՝

1. Հստակ
2. Նպատակաուղղված
3. Հակիրճ
4. Տեղին
5. Աշակերտների մակարդակի համապատասխան
6. Տրամաբանական հաջորդականությամբ
7. Մտածելու տեղիք տվող

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ

Բաց՝ սովորաբար սկսվում են <<Ի՞նչ >><<Ինչպե՞ս>> հարցերով :Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան :

Փակ՝ արտահայտվում է մեկ բառով պարզապես <<այո>> կամ << ոչ>>

Ենթատեքստով՝ << Դուք համաձայն եք ,որ Y-ը ավելի հետաքրքիր է քան ՝ X-ը կամ դուք հավանաբար կսխալվեք ,եթե ընտրեք Z տարբերակը >> և այլն :

Հետադարձ ՝ Ճշգրտվում է նյութի ընկալումը ,աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը նրանց պատասխանները զարգացնելու ,կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու նպատակով :

Հուշող՝ «Չե՞ք կարծում արդյոք, որ ...» , « Մի՞թե դուք կարծում եք ,որ ...»;

ՈՒղղորդող ՝ «ի՞նչ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս»

https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Իմ հետազոտական աշխատանքն իրականացնում եմ ,Գեղարքունիքի մարզի Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի 10-րդ դասարանում, որտեղ սովորում են 19 աշակերտներ ՝ 11 աղջիկ և 8 տղա:

Հայոց պատմություն առարկան այդ դասարանում դասավանդում եմ շաբաթական 2 դասաժամով , դասացուցակով բաշխված է երեքշաբթի չորրորդ ժամին ,և ուրբաթ օրը վեցերորդ դասաժամին :

Դասարանում սովորում են և ուժեղ, և թույլ ընդունակություններով օժտված երեխաներ:Հետազոտական աշխատանքում ներգրավել եմ ութ աշակերտների ,որոնք ունեն կարողությունների և հմտությունների տարբեր մակարդակներ :

Աշակերտներից մեկը՝ Բ.Լ խոսում է դանդաղ ,մտքերը դժվարությամբ է դասավորում և արտաբերում:Մյուս աշակերտները ՝ Ա .Ս-ն,Մ. Ա-ն, Մ. Ս -ն, Օ .Ա-ն և Մ. Լ-ն ունեն ընդունակությունների միջին մակարդակ ,հայոց պատմության դասերից գնահատվում են 5, 6 երբեմն 7:Դասարանում սովորում է նաև ներառական կրթության կարիք ունեցող մեկ աշակերտ Ս.Ա-ն ,ուստի և նպատակահարմար գտա հետազոտական աշխատանքում ներգրավել նաև Ա-ն: Ա-ը ունի հենաշարժողական խնդիրներ ,խոսում է դանդաղ բառերը հազիվ իրար կապակցելով ,այդուհանդերձ ուսման նկատմամբ դրսևորում է հետաքրքրություն ,ուզում է սովորի ,մյուս աշակերտների պես մասնակցի դասերին:

Հետազոտության խմբին կցել եմ նաև դասարանի հարվածային աշակերտներից եկուսին ՝ Խ.Գ-ին և Գ.Ա-ին:

Այդ օրվա դասը, << Արաբական խալիֆայությունը և Հայաստանը>> թեման էր:Այն ընդգրկուն թեմա է ,և ըստ թեմատիկ պլանավորման հատկացված է 3 դասաժամ:

ՈՒստի ,դասի նկատմամբ աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար , կիրառել եմ իմ նախընտրած՝ հարցադրումների մեթոդը:

.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր <<Արաբական խալիֆայությունը և Հայաստանը >>(տե՛ս դասապլան-1 էջ՝ 16): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք <<Արևելյան Հայաստանը 6-րդ դարում >> թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ ;Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո,կարճ դասախոսությամբ հաղորդեցի նոր դասը , 8 միջին առաջադիմության տեր աշակերտներին ,որոնց նկատմամբ պետք է իրականացնեի հետազոտական աշխատանքս փորձեցի հարցադրումների միջոցով ստուգել նրանց գիտելիքները նոր դասից :

Քանի որ հետազոտվող աշակերտները միջին կարողությունների տեր են, իմ հարցերին պատասխանում էին ոչ լիարժեք:Այսօրվա դասից գնահատվեցին 7 աշակերտներ :

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:Որպես տնային աշխատանք հանձնարարեցի <<Արաբական խալիֆայությունը և Հայաստան>> դասը /էջ57-60/, Հայոց պատմության աշխատանքային տետրում դասից դուրս գրել ժամանակագրությունը ,նոր անուններ և հասկացություններ :

.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր <<Հայաստանն Արաբական խալիֆայության կազմում>>: Թեման բավականին մատչելի էր և հետ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով : Նախորոք մշակված հարցադրումների միջոցով անվանակոչված աշակերտերին տրվեցին հարցեր :Փակ ,Բաց,Հուշող: Անվանակոչված աշակերտներից ոչ բոլորը կարողացան պատասխանել հարցերին :Այնուհետև հնչեցրեցի հետադարձ և ուղղորդող հարցադրումներ, աշակերտները հարցերին պատասխանում էին մեծ ոգևորությամբ: Այնուհետև Նախորդ դասին անդրադարձ կատարելու համար որոշեցի կիրառել M-աձև աղյուսակը : Աղյուսակը լրացնելու համար Գրատախտակին մոտեցան 3 աշակերտներ: Աշակերտներից մեկը կարողացավ անթերի լրացնել աղյուսակը ,մյուս երկուսը ունեին որոշ բացթողումներ ՝կապված տեղանքի ճիշտ նկարագրության հետ ,նրանց բաց թողած սխալները , իմ թույլտվությամբ փորձեցի տեղից պատասխանել անվանակոչված աշակերտները:Աղյուսակը լրացնելուց հետո ,կարճ դասախոսությամբ աշակերտների ներկայացրեցի նոր ուսուցանվող դասը : Հարցադրումների միջոցով փորձեցի ստուգել աշակերտների գիտելիքները նոր յուրացված դասից : Գնահատեցի այն աշակերտներին ովքեր մասնակցել էին դասին ,գնահատվեցին նաև պասիվ աշակերտները ՝ըստ իրենց գիտելիքների : Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարությունով :

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 3 փորձարարական դասեր որի ժամանակ 8 միջին առաջադիմության տեր աշակերտներն տրվեցին հարցեր ՝ Փակ , Բաց, Հուշող,Ենթատեքստով, Հետադարձ և Ուղղորդող ;Դասերի ընթացքում կիրառվեցին բազմաթիվ մեթոդներ ,այդ թվում աղյուսակների կազմում

որում ներգրաված էին հետազոտվող աշակերտները : Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժություններին կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով:

6. Համացանցից լրացուցիչ նյութերի ուսումնասիրությունը ;

Գրականության ցանկ

https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.htmlhttps://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Վարդան Ավետիսյան

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	10
Թեմա	Արաբական խալիֆայությունը և Հայաստանը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կավիճ, գրատախտակ, աշխատանքային տետր, ատլաս, (Բ. Հարությունյան, Ա մաս,)						
Դասի նպատակ	ա) Գիտենա արաբական ցեղերի մասին,և նոր կրոնի՝ իսլամի դերը նրանց կյանքում: բ)Կարողանա վերլուծի դեպի Հայաստան արաբական արշավանքների պատճառները : գ) Գնահատի Թեոդորոս Ռշտունու գործունեությունը որպես պետական գործիչ: դ) Գնահատի 652թ կնքված պայմանագիրի հայ- արաբական նշանակությունը:						
	Ուսուցման արդյունքներ որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:						

Վերջնարդյունքներ	Աշակերտները կարողացան ներկայացնել արաբական արշավանքների ժամանակ Թեոդորոս Ռշտունու ջանքերը՝ որպես երկրի սպարապետ: Գնահատեցին 652թ հայ-արաբական պայմանագրի կետերը:			
Գործողություն. Ժամ/ տրողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5 րոպե	Ողջույն: Անհրաժեշտության դեպքում պատասխանում ուսուցչի հարցերին	Ողջույն, հաշվառում, դասի նախապատրաստում, տնային առաջադրանքների ստուգում	Ի՞նչ անհասկանալի հարցեր ունեն անցած դասից,	
Խթանում 5-10 րոպե	Լսում են ուսուցչին, պատասխանում են հնչեցրած հարցերին՝ հարկ եղած դեպքում հնչեցնում հարցեր:	Հարցադրումների միջոցով աշակերտներին հիշեցնել նախորդ դասի կարևոր իրադարձություններ և պատմական կերպարներին նրանց կատարած քայլերը, որպես պետական գործիչներ:	1)Ի՞նչ նշանակություն ունեցավ Դվինի 554 թ. Եկեղեցական ժողովը: 2)Ի՞նչ նպատակ էին հետապնդում Խոսրով առաջինի վարչական վերափոխումները: 3)Որո՞նք էին 571-572թթ հակապարսկական ապստամբության պատճառները: 4)Ե՞րբ տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև: 5) Բնութագրել Մորիկ կայսեր հայահալած քաղաքականության գլխավոր նպատակը:	Զրույց, մտագրոհ

Իմաստի ընկալում **10-15** րոպե	Հարցերին պատասխանում են անվանակոչված աշակերտները:	Կարճ դասախոսությամբ ներկայացնել նոր ուսուցանվող դասը: Այնուհետև հարցերի միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ:	1)Որտե՞ղ էին բնակվում արաբական ցեղերը: 2)Ինչով էին հիմնականում զբաղվում արաբակա ն ցեղերը: 3)Ինչպես կոչվեց արաբների միասնական պետությունը: 4)Ո՞ր կրոնը պատճառ դարձավ արաբների միավորմանը:Ինչ էր քարոզում նոր կրոնը 5)Ո՞ր իրադարձությունից հետո ,և ում կողմից Թ. Ռշտունի նշանակվեց հայոց սպարապետ և որտեղ էր նրա նստավայրը: 6) Ի՞նչ նպատակ էին հետապնդում դեպի Հայաստան արաբների արշավանքները: 7) Ե՞րբ է տեղի ունեցել արաբական առաջի, երկրորդ և երրորդ արշավանքները: 8) Ովքե՞ր կքեցին 652թ. Հայ-արաբական պայմանագիրը: Նշել կետերը:	Զրույց, հարցադրումների մեթոդը, կիրառել մտագրոհ: Հարցադրումների մեթոդ:
Կշռադատում **10** րոպե	Աշխակերտները լիարժեք ընկալում են, դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները:	Ուսուցիչը այս փուլում ամրապնդում ամբողջացնում է հիմնական գաղափարները:	1)Ո՞րն էր հայ-արաբական պայմանագրի դերը	
Տնային աշխատանք **5** րոպե	Տնային աշխատանքի հանձնարարում Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները: Գրել ժամանակագրությունը:			

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները հարցերին պատասխանում էի լիարժեքորեն:

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Վարդան Ավետիսյան

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	10
Թեմա	Հայաստանն Արաբական խալիֆայության կազմում						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կավիճ, գրատախտակ, աշխատանքային տետր, ատլաս, (Բ. Հարությունյան, Ա մաս,)						

Դասի նպատակ	ա) Սահմանի Արմինիա, ոստիկան և ամիրայությունների բառերի բացատրություններ: բ)Գիտենա Հայերն ումն էին անվանում ոստիկան և որն է նրա գործառույթները : գ) Իմանա՝ Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանը վերջնական նվաճելուց հետո: դ) Վերլուծի հակաարաբական ապստամբության պատճառները, և գործող անձանց գործունեությունը:			
	Ուսուցման արդյունքներ որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:			
Վերջնարդյունքներ	Աշակերտները կարողանան ՝ Ճիշտ ներկայացնել Արմինիա կոչվող վարչական միավորի տարածքները: Վերլուծի Վարդանակերտի ճակատամարտը, և ապստամբների գործունեությունը:			
Գործողություն. Ժամ/ տրողություն	Ուսումնական գործունեություն <u>Աշակերտներ</u>	Ուսումնական գործունեություն <u>Ուսուցիչ</u>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
3 րոպե	Ողջույն: Անհրաժեշտության դեպքում պատասխանում ուսուցչի հարցերին	Ողջույն, հաշվառում, դասի նախապատրաստում, տնային առաջադրանքների քննարկում	Ի՞նչ անհասկանալի հարցեր ունեն անցած դասից,	
Խթանում 20 րոպե	Լսում են ուսուցչին, պատասխանում են հնչեցրած հարցերին՝ հարկ եղած դեպքում հնչեցնում հարցեր: Գրատախտակին մոտենում են անվանակոչված աշակերտները, և համապատասխան այուսակում ներկայացնում իրենց հանձնարարված աշխատանքը:	Հարցադրումների միջոցով աշակերտներին հիշեցնել նախորդ դասի կարևոր իրադարձություններն և պատմական կերպարներին նրանց կատարած քայլերը, որպես պետական գործիչներ: Անվանակոչված 3 աշակերտներին հանձնարարել գրատախտակին Մ-ածև աղյուսակի միջոցով ներկայացնել արաբական 1,2,3, արշավանքները:	1)Որտե՞ղ էին բնակվում Արաբական ցեղերը : 2)Ինչո՞վ էին հիմնականում զբաղվում Արաբները: 3)630թ ու՞մ հաջողվեց միավորել Արաբական ցեղերին : 4)Ի՞նչը պատճառ դարձավ Արաբների միավորմանը: 5) Ի՞նչ էր քարոզում Իսլամը: 6) Ո՞վ էր Թեոդորոս Ռշտունին, և որտեղ էր նրա նստավայրը: 7)Ի՞նչ նպատակով էին Արաբները արշավել Հայաստան: 8)Ե՞րբ է կնքվել հայ-արաբական պայմանագիրը: 9)Ի՞նչ է իրենից ենթադրում հաբ-արաբական	Զրույց, մտագրոհ Մ-ածև աղյուսակ

			պայմանագիրը, ճշել կետերը:	
Իմաստի ընկալումը **10** բոպե	Հարցերին պատասխանում են անվանակոչված աշակերտները:	Կարճ դասախոսությամբ ներկայացնել նոր ուսուցանվող դասը: Այնուհետև հարցերի միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ:	1)Հայաստանը ե՞րբ վերջնականապես նվաճվեց արաբների կողմից: 2)Ո՞ր տարածքներից կազմվեց Արմինիա վարչական միավորը: 3)Սկզբում որն էր Արմինիայի կենտրոնը : 4) Ո՞վ էր գլխավորում Արմինիան: 5)Ինչ նպատակով 725թ Հայաստան ուղարկվեց Հերթ անունով արաբ պաշտոնյան: 6) Ո՞վ էր Հայաստանի առաջին վոստիկանը: 7) Ե՞րբ է տեղի ունեցել Վարդանակերտի չակատամարտը: 8) Ո՞վքեր էին 748թ հակաարաբական ապստամբության ղեկավարները,և ինչպես ավարտվեց այն:	Զրույց, հարցադրումների մեթոդը, կիրառել մտագրոհ: Հարցադրումների մեթոդ:

Կեռադատում **10** բոպե	Աշխակերտները լիարժեք ընկալում են, դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները:	Ուսուցիչը այս փուլում ամրապնդում ամբողջացնում է հիմնական գաղափարները:	1)Ո՞րն էր հակաարաբական ապստամբության նշանակությունը:	
Տնային աշխատանք **2** բոպե	Տնային աշխատանքի հանձնարարում Հանձնարարել նախորդ դասի շարունակությունը՝ Հայաստանն Արաբական խալիֆայության կազմում/էջ 60-63 Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները: Գրել ժամանակագրությունը:			

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները հարցերին պատասխանում էին լիարժեքորեն: Մ-ածև ադյուսակի միջոցով անվանակոչված աշակերտները իմ հետազոտության արդյունքում ցուցաբերեցին բավարար արդյունք: Հարցադրումների միջոցով դասին ներգրավված էին գրեթե բոլորը: